

Պ. Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻՆ

Մենք առաջին անգամ պատասխանելով պ. Նազարեանի քննադատութեան քանի մի կէտերին, չենք ասել և միտք ևս չենք ունեցել ասելու, թէ մեր գրքայինքը անսխալ են, չունին ոչինչ պակասութիւն—այդ յանդիմութիւնը հեռու է մեզանից. մենք և ոչ իսկ պ. Նազ. քննադատութեան ամբողջութեանն էինք պատասխանել, այլ ասել ենք՝ «Նոյն համակրութեամբ կարգալով պ. Նազ. քննադատութիւնը (որպիսի համակրութեամբ կարգացած ենք ամենայն անաչառ քննադատութիւնը), մենք նորա մասնաւոր նկատողութիւնների վերաբերութեամբ քանի մի խօսք կ'սկսենք»։ Պ. Նազարեանը մեր ասածները չ'հասկանալով Մեղուի № 14 պատասխանել է մեզ իւրեան արժանի ձևով։ *)

Պ. Նազարեանը իւր առաջին յօդուածում ասել էր ք տառի համար, որ նա միանգամ դասի նիւթ լինելուց յետոյ, ամբողջ ամիս չքանում է գրքայինք, որովհետեւ դա ամբողջ 17 դասի ընթացքում մոռացուած է բուրովին։ Այսօր, երբ մենք նկատեցինք պարոնին այդ սխալը, նա ցոյց է տալիս, որ այդ տառը միայն 8 դասի մէջ է յիշուած. ուրեմն Պարոնը խոստովանում է, որ ինքը կիսով չափ սխալուել է։ Հիւանդոտ աչքերը լաւացնել մարդկային կարողութիւնից վեր չէ. բայց երբ մարդս կամաւ իրան կոյր է ձեռնցում, չգիտեմ որպիսի բժիշկ կարող է նորան ճար անել։ Իւր առաջ բերած գլուխներից, որոնք են՝ ժա, ժդ, ժե, ժզ, ժը, ի, իբ, իդ, նոյն իսկ ժա դասում սկսվում է ք տառի վարժութիւնը. ահա այն բառերը, որոնցով սկսվում է այդ դասը—արար, ունար, բան, բարի, անբան, բարակ և այլն։ Այնուհետև 12, 13, 14, 15, 16, 17 դասի տակ զետեղած աղիւսակում, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 26 և այլ դասերում այդ տառը կրկնվում է, իսկ պ. Նազ. առաջ բերած գլուխներից բոլորը մոռնում են այդ դասերի մէջ, ուրեմն պ. Նազարեանը ոչ թէ կիսով չափ է սխալուել, այլ ամբողջապէս։ Պարոնը կարծես ակնարկում է և այն բանի վերայ, թէ ք տառը ունեցող դասերի մէջ ևս այդ տառը կրկնվում է մի կամ միքանի բառով։ Ուրիշ տեսակ ինչպէս կարող էր լինել, երբ իւրաքանչիւր դասի մէջ բառերի մեծ մասը պատկանում է այն տառին, որը դասի նիւթ է եղած։ Եթէ իւրաքանչիւր դասի մէջ մտնէին բոլոր յայտնի տառերով 4, 5 բառ, այն ժամանակ ամեն մէկ դաս միքանի թերթից պէտք էր բաղկացնել։ Վեր առնենք, օրինակ, 30-դ դասը. մինչև այն տեղ մանուկը սովորել է մօտ 35 տառ, եթէ իւրաքանչիւր տառի համար վերառնէինք հնգական բառ, պէտք է այդ դասը բաղկանար մօտ 200 բառից, և այսպէս՝ որքան առաջ գնայինք, նոյնքան պէտք է ընդարձակուէին դասերը։ Հասկանալի է, թէ որքան անհեթեթ է այսպիսի մի ակնարկութիւն այն մարդու կողմից, որը նախանձախնդիր է ուսուցիչ կոչուելու։ **)

Մենք չենք կարծում թէ պ. Նազ. չէ հասկանում ողի բառի բուն նշանակութիւնը, ուստի և բողբոլին արդարացնում ենք նորան, որ գործ է դրել իւր արհեստը միանգոր վահանով դռնէ պատասպարուելու։ Ինչ որ վերաբերում է բանակ, հուր, դաւակ, արեւոյն և այլ բառերին, մենք խոստովանում ենք, որ մանուկ ուսուցիչները այդ բառերը չեն կարող հասկացնել մանուկ ուսանողներին։

Պ. Յ. Նազ. իւր պատասխանի մէջ այնպիսի քերականական թուրքութիւններ է ցոյց տալիս, որպիսին մենք չէինք ներել ա՛ դասատան աշակերտներին անգամ։ Նա պնդում է, թէ չէ կարելի ասել, առաւօտեան, երեկոյեան կարդում ենք, ընթրիք ենք անում, միմիայն նորա համար, որ նոքա ածականներ են։ Որովհետեւ պ. Նազարեանը այդքան բոբիկ է երևում, ուստի մենք զիջանում ենք նորան բացատրել այդ բանը։—Ածական անունները նոյնութեամբ, կամ մասնաւոր փոփոխութեամբ դրուելով բայի մօտ, մակբայի պաշտօն են կատարում։

Օրինակներ. գեղեցիկ զիւրք, լաւ գրիչ, ծանր քար, յանդուկն երիտասարդ։

Գեղեցիկ երգել, լաւ գրել, ծանր քայլել, յանդուկն (նաբար) խօսել։

Առաջին օրինակների մէջ նշանակեալ բառերը ածական են, որովհետեւ որոշում են առարկաները ուրիշ նոցա նման առարկաներից, երկրորդ օրինակների մէջ նոյն բառերը մակբայ են, որովհետեւ ցոյց են տալիս գործողութեան ձևը։—Ուրիշ օրինակներ, ուր ածանցական և բարդ բառերը, որպէս և յարաբերական պարագայական ածականները—առաւօտեան, երեկոյեան—ածականի և միանգամայն մակբայի պաշտօն են կատարում։

Ծիծաղաղէմ օրիորդ,	Ծիծաղաղէմ ճեմում էր.
Համեստաղէմ մանուկ	Համեստաղէմ նայում էր.
Պարզերես մարդ	Պարզերես կացիք առաջի աւանդողին (Շնորհ)
Արագաթնից թռչուն	Արագաթնից ելանել իկամարս լուսեղէնս (Մաշտ.)
Հայերէն լեզու	Հայերէն է կարդում.
Աշխարհաբար գրութիւն	Աշխարհաբար է գրում.
Առաւօտեան ճառագայթներ	Ամուտս 7-ին, առաւօտեան Մուշ, պաւլիօնը այրուեցաւ:
Երեկոյեան վերջալոյս	Շաբաթ երեկոյեան կարկուտ եկաւ թիֆ. (Մեղ. № 17) Կիւրակի երեկոյեան դերասանական խումբը ներկայացրեց Վ. Մամ. (Մշ. № 17.)

*) Թէև մեր կողմից աւելորդ էր պ. Նազ. վայրախօս տառադնութեանը պատասխանել, որի պատճառով և այսչափ ուշացրինք սորան, սակայն մի կողմից ընթերցողներից ումանց կարծիքը փարատելու, միւս կողմից ևս պ. Նազ. մի թեթեւ ծառայութիւն մատուցանելու պատճառով, գէթ յօդուտ այն սաների, որոնք յանձնուած են նորան, մենք զիջանք պատասխանելու։

**) Համոզուած լինելով, որ պ. Նազար. ճշմարիտը և տեսանելին զիտելու ընդունակութիւնից զուրկ է, մենք առաջ չենք բռնում այստեղ բոլոր դասերում եղած բառերը, որոնց մէջ ք. տառը գործ է ածուած. յուսով ենք, որ ընթերցողը նեղութիւն կ'կրի միանգամ անձաւր նայելու գրքովին և իսկութեանը տեղականալով, պ. Նազ.—ի գրականական աղնութեան չափը որոշելու։

Բացադրութեան եղանակը երկու է. ընդունակ և հասկացող աշակերտին բաւական է միանգամ ասել և նա կ'հասկանայ. իսկ անընդունակներին համար հարկաւոր է երկար օրինակներ առաջ բերել: Ընթերցողը կ'նկատէ, որ մենք պ. Նազարեանին հասկացնելու համար վերջին միջոցն ենք գործ դրել:

Ինչպէս ածական անունները, նոյնպէս և գոյականները, մասնաւոր փոփոխութեամբ, կամ այլ և այլ հոլովներէ վրայ յօդ առնելով, մակբայի պաշտօն են կատարում: Օրինակ. Ման էր գալիս ամենայն առաւօտ: Կարողում էր ամենայն երեկոյ: Առաւօտս շատ դովէր օդը և այլն: Պարոնին հասկացնելու համար մենք այն ևս պէտք է աւելացնենք, որ գոյական մակբայները սովորապէս գործ են ածվում, երբ իրանց մօտ ունին մի այլ որոշող բառ, կամ գործողութեան կատարման մասին մասնաւոր ու որոշ հասկացողութիւն է գրվում. իսկ պարագայական ածական մակբայը գործ է ածվում, երբ գործողութեան կատարման ժամանակի մասին ընդհանուր հասկացողութիւն է գրվում—թէ և իգիտութիւն Նազարեանի աւելացնում ենք, որ վերջիններս կարող են փոխարինել առաջիններին, երբ նորա չունին իրանց մօտ որոշող բառ:

Մենք միանգամ առիթ ենք ունեցել մեր կարծիքը յայտնելու այն մասին, թէ ինչ դեր պէտք է խաղադրար լեզուն մեր ազգային ուսումնարաններում: մենք ասել ենք և ասում ենք, որ դրաբար իբրև լեզու և աշխարհաբար լեզու փոխարինող լեզու չէ կարող համարուիլ, բայց միևնոյն ժամանակ նա է շտեմարանը և մայրը աշխարհաբարի, որի ոչ միայն բառերի և դարձուածների մեծ մասը աւելում են նորանից, այլ և քերականական ձևերի մեծագոյն մասը իրանց խորին ծագումը նորանից են առնում: Այս հիման վերայ էլ, որ մենք մեր առաջին յօդուածում մի օրինակով կամեցել էինք ցոյց տալ առաջին բառի իբրև մակբայ վարուիլ: Թէ և պ. Նազարեանին շատ դժուար լինէր այս բանը հասկանալ, այնու ամենայնիւ մենք, ընթերցողների ներդրմութեանը ապաւինուելով, կաշխատենք հասկացնել նորան, որ այս կանոնը իւր սկիզբը առնում է խորին հնութիւնից: Ահաւասիկ մի քանի օրինակներ: Ողջակէզս առաւօտինս: Ի պաշտամունս յերեկոյինս և յառաւօտինս (առաւօտեան և երեկոյեան պաշտամունքներում): Վերոյիշեալ օրինակների մէջ նշանակեալ բառերը ածական որոշողներ են: Հետեւեալ նախադասութիւններում նոյն ածականները մակբայի պաշտօն են վարում: Օրինակներ. Առաւօտինս յորժամ ի քաղաքէն. Երանէր: Առաւօտինս ճռուշական երգովք զերկրագործս զարթոցեալ: Յերեկոյեան քաղաք՝ ուտիցէք: յերեկոյեան մինչև ցառաւօտ: Երբ տէրն տանն կայցէ, յերկոյեան, եթէ ի մէջ գիշերի, (երեկոյեան թէ մէջ գիշերին): Ես առ Աստուած կարգացի և նա լուաւ. ինձ— Ի վաղորդեան և Ի հասարակ աւուր:—Վերոյիշեալ օրինակների մէջ (յառաւօտինս, յերեկոյինս) ին ոչ թէ հոլովական վերջաւորութիւն է, այլ ածանցական: Յայտնի է, որ քանի մի ժամանակ ցոյց տուող բառեր ածանցվում են եան, եայ, ին մասնիկները անխփր ընդունելով օրին. Վաղորդեայ, վաղորդեան, առաւօտեայ, առաւօտեան, երեկոյեայ, երեկոյեան, երեկոյեան: Աշխարհաբար լեզուն ընդունելով այդ բառերը՝ գործ է ածում նոցա միմիայն մի ածանցական վերջաւորութեամբ—եան—որը փոխարինելով բոլոր վերջաւորութիւններին, միևնոյն ժամանակ կատարում է այն պաշտօնները, որը կատարում էին բոլորը:

Եթէ մի բան կարողացանք հասկացնել պ. Նազարեանին, չհուշեցանք. իսկ եթէ ոչ, մենք մեղաւոր չենք: Յոյց տանք այժմ, թէ որքան է հասկանում Պարոնը նախադրութեան և մակբայի նշանակութիւնը: Մեր առաջ բերած օրինակը—Եւ ժողովուրդն, որ առաջին և զինի երթային—Պարոնը ըստ իւր տեսութեան վերլուծելով, ասում է, թէ առաջին ուրեմն և զինի բառերը նախադրութիւն են, որովհետեւ կարելի է նոցա մօտ աւելացնել որևէ ինդիք (Յիսուսի): Մենք ստիպուած ենք հասկացնել պարոնին, երբ նա այդ չ'գիտէ, որ լեզուի մէջ չկայ կանոն, որը մեզ տեղիք տար մեր ցանկութեան համաձայն նախադրութեան ինդիքը դուրս ձգելով մակբայ չինել, իսկ մակբայի վերայ ըստ հաճութեան խնդիր աւելացնելով նախադրութիւն չինել: Այսինս որ մեր բոլոր քերականները պ. Նազարեանի չափ խելք չեն ունեցել, երեկ այն պատճառով, որ նորա ծանօթ չեն եղել օտար լեզուներին: Մի բան միայն մեզ սաստիկ զարմացնում է, որ Վենետիկ հայերը ևս, որոնք հայկաբանութեան ներկայացուցիչ են համարվում, իրանց լեզուագիտական բառ գրքում, մեր առաջ բերած օրինակի մէջ առաջին բառը մակբայ են համարում: Թող գիտենայ պ. Ն. որ կան բաղմաթիւ բառեր, որոնք վարվում են թէ իբրև մակբայ և թէ իբրև նախադրութիւն: Բայց որ աշակերտները նոցա որոշելիս չ'մոլորուին իրան նման, քերականութիւնը հետեւեալ հեշտ եղանակն է առաջարկում: Եթէ բառը ունի իւր մօտ գոյական խնդիր, նախադրութիւնէ, իսկ եթէ զրուած է բայի մօտ և ցոյց է տալիս նորա որևէ պարագան, նա մակբայէ: Օրինակներ.

Ժողովուրդը դուրսը սպասում էր	Ժողովուրդը եկեղեցուց դուրսը սպասում էր:
Ժողովուրդն կայր արտաքոյ:	Ժողովուրդն կայր արտաքոյ դրանն:
Ինչպէս ասացի ձեզ.	Ինչպէս մարդ ասացի ձեզ:
Վերայ վազեց և հաջում էր.	Սեղանի վերայ դրած էր...
Ներքեւը կանգնած էին.	Սարի ներքեւը կանգնած էին:

Առաջին օրինակների մէջ նշանակեալ բառերը մակբայ են. երկրորդ օրինակների մէջ նորա նախադրութիւն են:—Չնայելով, որ պ. Նազարեանը հայերէն այնքան չէ հասկանում, որ կարողանար տուած բառի մէջ որոշող յօդը բուն բառից զանազանել, նա օտար լեզուների միջնորդութեամբ է կամենում բնդել իւր կարկատանները: Պարոնը առաջին բառը մեր յիշած նախադասութեան մէջ, թարգմանել է *передъ, предъ*, որը ճիշտ չէ: Մենք առաջ կ'բերենք ամբողջ նախադասութեան բառացի թարգմանութիւնը: Народъ же, который впереди и сзади шель... Այժմ հարցնվում է ուսագետ պ. Նազարեանին *впереди и сзади* բառերը նախադրութիւն (*предлогъ*) են, թէ մակբայ (*наречіе*): Գուցէ դժուարացել է պարոնը հասկանալ մեր առաջ բերած նախադասութիւնը դրաբար լինելուն պատճառով. ահաւասիկ նոյն նախադասութեան աշխարհաբարը, որը մենք առնում ենք աշխարհաբար աւետարանից բառ առ բառ. Եւ ժողովուրդը, որ առաջին և յետեւէն կերթային: Եթէ պ. Նազարեանը գէթ աշխարհաբարին ծանօթ լինէր, այսպիսի հազարաւոր օրինակներ կ'դնէր նոյն իսկ ժողովրդական լեզուի մէջ: Մենք այստեղ առաջ կ'բերենք քանի մի նախադասութիւններ մեր հին մատենագիրներէ.

բից: Զքոյին իսկ զողիդ տեսանես հանապաղ մեռեալ առաջիդ (փարպ.) Նրթիցուք մեք առաջի և դուք զինի (վարք հրց): Նկեալ առաջի՝ մատուցանէին քացախ...: Նթէ չցաւենք այսպիսիների վերայ, ընթերցող, զոնէ չ'պէտք է ցաւենք այն մանուկների վերայ, որոնց վիճակուած է այսպիսի ուսուցիչներից բան սովորել: — Մենք անպատուութիւն չենք համարում «Չամչեանի աշակերտ» անունը կրել մեզ վերայ մի մարդուց, որը լեզուի այբուբենին անգամ անծանօթ է երևում, ուր մնաց որ հասկանալ կարողանար այն սերտ յարաբերութիւնը և անխղիւ կապը, որը ունի արդի աշխարհաբարը հին հայերէնի հետ: Մենք մինչև անգամ չէինք զարմանալ, եթէ պ. Նազարեանը հայերէնը չգիտենալով և ռուսերէնին դիմելով այսպիսի նախադասութիւններով սկսէր խօսել՝ „Սա մի գալաւաստիկ է, որը մեծանալով լեռնուշկայ կ'դառնայ:“ Ի՞նչի պէտք է զարմանալ, երբ մարդս չ'գիտէ հայերէն, ինչի չխօսէ ռուսերէն: Ի՞նչ է նշանակում գալաւաստիկ, պ. Նազարեան, եթէ դուք գրաբարից այդքան խորշում էք, աշխարհաբարն էլ չգիտէք, միթէ ամօթ էր զէթ ձեր ընկերներին հարցնել այդ բառի հայերէնը:

„Ему вишенка, красна́я, свои́ вѣтки подае́тъ“ նախադասութիւնը մենք փոխադրել ենք այսպէս. „Կեռասնին ծիծաղաղէմ քաղցրիկ պտուղ էր ընծայում (նորան): (Նրթերցողը կնկատէ, որ մենք նախադասութեանը բոլորովին ուրիշ ձև ենք տուել: Պ. Նազարեանը տեսէք ինչ իմաստալի եղբակացութիւն է անում. „Պարոնը կարծում է (իբր թէ, մենք կարծում ենք).—ասում է նա—թէ ծիծաղաղէմ բառը վերաբերում է պտուղ բառին և թէ այդ պատճառով красна́я ածական է (!):“ Մենք այդ բանը չենք կարծում. մի բան միայն հաստատապէս ասում ենք, որ պ. Նազարեանը ամենահասարակ նախադասութեան միտքն անգամ ըմբռնելու կարողութիւն չունի: Վերջին աշակերտն անգամ կ'հասկանար, որ այս նախադասութեան մէջ ծիծաղաղէմ բառը բային է վերաբերում, և թէ մենք դորան գործ ենք ածել ծիծաղ դէմքով բառի փոխանակ: Ինչպէս առաջարկում էր պ. Նազարեանը իւր առաջին յօդուածում:

Մենք վերջացնում ենք մեր խօսքը առ ի սրտէ խոստովանուելով, որ ավստում ենք պ. Նազարեանին պատասխանելու համար գործ դրած թէև չնչին ժամանակի համար, և յարակցում ենք, որ ոչինչով չենք կարող մեզ մխիթարել, քանի որ մտածում ենք, թէ պ. Նազարեանի նման հայկաբան մանկավարժների առաջ յաւիտեան կորցրինք մեր հեղինակութիւնը:

Ն. Տէր—Ղևոնդեան.

1875 թ. ապրիլ.

Թիֆլիս.

